

#կրիրդիմակ #փրկիրկյանքեր #acbacares մրցույթ

1. Ներածություն

1.1 Լինելով սոցիալապես պատասխանատու ընկերություն և կարևորելով հաճախորդների կողմից դիմակներ կրելն ու առողջապահական անվտանգության կանոնների պահպանումը, ինչպես նաև Բանկի հեռահար ծառայությունները խթանելու նպատակով՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից հունիսի 5-30-ը ներառյալ իրականացվում է Մրցույթ Հայաստանում Ֆեյսբուք և Ինստագրամ սոցիալական ցանցերի ֆիզիկական անձ օգտատերերի համար: Օգտատերերը իրենց ֆեյսբուքյան կամ ինստագրամյան էջերում հրապարակելով պաշտպանիչ դիմակով լուսանկար՝ հնարավորություն կունենան ստանալ նվեր 5 նոթբուքներից մեկը: Հաղթողները ընտրվելու են պատահականության սկզբունքով:

1.2 Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմաններն ու Դրույթները:

Հարգելի՛ հաճախորդներ, հոգ տանելով Ձեր առողջության մասին, հորդորում ենք.

- Կրել դիմակներ,
- օգտվել ACBA Mobile հավելվածի ծառայություններից,
- Բանկի 24/7 ռեժիմով աշխատող վճարային տերմինալներից:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Իրականացվող Մրցույթի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի պարագայում տեղեկատվությունը կտեղադրվի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Մրցույթի շրջանակում մրցանակները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Մրցույթին չեն կարող մասնակցել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ Բանկ» ՓԲ, «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲ, «ԱՄՈՆԵՐԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲ, «ԱԿԲԱ ՖԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերությունների աշխատակիցները:

2.5 Կազմակերպիչն իրավունք ունի ոչ իրական (Fake users) և ոչ հայաստանյան օգտատերերին մրցույթի ամփոփման ժամանակ հեռացնել մասնակիցների ցանկից:

2.6 Յուրաքանչյուր անձ մասնակցելով մրցույթին, հաստատում է, որ.

2.6.1 ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն մրցույթին մասնակցելու համար,

2.6.2 ծանոթացել է մրցույթի պայմաններին, ընդունում է դրանք, չի գտնվում մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության, չարամիտ համաձայնության կամ դժվար կացության մեջ, լիովին հասկանում է իր գործողությունների նշանակությունը,

2.6.3 ստացել է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և համաձայնությունները (այդպիսիք պահանջվելու դեպքում),

2.6.4 մասնակցելով մրցույթին չի խախտում երրորդ անձանց որևէ իրավունք,

2.6.5 իր կողմից մրցույթին մասնակցության հետ կապված երրորդ անձանց կողմից Կազմակերպիչին որևէ պահանջ կամ բողոք կամ հայց ներկայացվելու դեպքում՝ պարտավորվում է ամբողջական պատասխանատվություն կրել դրանց համար, փոխհատուցել դրա հետ կապված Կազմակերպիչի կրած վնասները,

2.6.6 Թույլատրում է կազմակերպիչին առանց լրացուցիչ վարձատրության կամ համաձայնությունների օգտագործել իր կողմից մրցույթի շրջանակներում հրապարակված նյութը/լուսանկարը:

2.7 Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն չի ստանձնում մրցույթի մասնակցության ընթացքում մասնակիցների կրած ուղղակի կամ անուղղակի վնասների, կատարած ծախսերի համար:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Մրցույթի շրջանակում Քո ֆեյսբուքյան կամ ինստագրամյան էջում բոլորին տեսանելի տարբերակով (public post) հրապարակիր պաշտպանիչ դիմակով լուսանկար:

3.2 Հրապարակման մեջ նշիր ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ Բանկի ֆեյսբուքյան կամ ինստագրամյան էջը (Tag անել):

3.3 Պարտադիր օգտագործիր #կրիրդիմակ #փրկիրկյանքեր #acbacares հաշթեգերը:

3.4 Հավանիր ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ Բանկի ֆեյսբուքյան էջը կամ դարձիր Բանկի ինստագրամյան էջի հետևորդ:

3.5 Օգտատերերը հնարավորություն ունեն կատարել մեկից ավելի հրապարակում:

3.6 Մասնակիցների ցանկում կընդգրկվեն միայն այն անձինք, ովքեր ճշգրիտ հետևել են մրցույթի կանոններին:

3.7 Օգտատերերը հնարավորություն ունեն նկարները հրապարակել հունիսի 5-ից՝ ժամը 19:00-ից սկսած, մինչև հունիսի 30-ը՝ ժամը 23:59:

3.8 Հաղթող օգտատերերի անունները կհրապարակվեն ս.թ. հուլիսի 10-ին՝ մինչև ժամը 23:59-ը, առցանց եղանակով:

3.9 Հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ <https://commentpicker.com>):

3.10 Առցանց ծրագիրը պատահականության սկզբունքով կընտրի հինգ անուն, որոնք կստանան նվեր մեկական նոթբուք:

3.11 Այն դեպքում, եթե ծրագիրն ընտրի նույն անունը մեկից ավելի անգամ, մասնակիցը կստանա միայն մեկ նվեր, իսկ ավտոմատ համակարգը նորից կգործարկվի՝ այլ հաղթող որոշելու համար:

3.12 Հաղթողների ընտրության գործընթացը կցուցադրվի ս. թ. հուլիսի 10-ին՝ մինչև ժամը 23:59-ը, Բանկի ֆեյսբուքյան էջով՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեռարձակման ստույգ ժամի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կհրապարակվի Կազմակերպչի ֆեյսբուքյան էջում:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ Ը-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: